



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՏԱՐՈՒՄԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբի կազմակերպութեամբ, Հայ Լեզուի Տարուան նուիրուած տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Դեկտեմբեր 16-ին, կ.ե. ժամը 4-ին, Յոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ:

Զեռնարկը կը վայելէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնն ու ներկայութիւնը:

Պիտի բանախօսէ Յոլիվուտի Ռոզ Եւ Ալեք Փիլիպոս Ազգ. վարժարանի տնօրէն՝ Դոկտ. Վիգէն Եագուպեան, նիւթ ունենալով՝ «Հայ Լեզուն կռուան մեր գոյատեւման»:

Տեղի պիտի ունենայ նաեւ ողջունահանդէսը ժագ Ս. Յակոբեանի «Մեսրոպաւէպ» հատորին: Մեր Լեզուին, Մեսրոպ Մաշտոցի ու ընդհանրապէս մեր գրաւոր ժարանգութեանց նուիրուած բանաստեղծութիւններու հատորը լոյս տեսած է Ազգային Առաջնորդարանի նախաձեռնութեամբ: Մեկենասութիւնը յանձն առած է Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր: Սուտքը ազատ է: Նախատեսուած է հիւրասիրութիւն:

WESTERN PRELACY CELEBRATION OF THE YEAR OF THE ARMENIAN LANGUAGE

On Sunday, December 16th, a celebration of the Armenian Language will take place at “Karapetian” Hall of St. Garabed Church in Hollywood, at 4:00 p.m. The event is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and is organized by the Prelacy Outreach Committee. Dr. Viken Yacoubian, Principal of Rose and Alex Pilibos School, will lecture on “The Armenian Language: Anchor of our Survival:”

The event will also feature a book presentation of Jacques Hagopian’s “Mesrobaveb” which was published recently by the Prelacy and is dedicated to the Year of the Armenian language and the inventor of our Alphabet St. Mesrob Mashdots.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՆՈՐ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 2 Դեկտեմբեր 2007-ն, Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մեծ ընտանիքին համար եղաւ յիշատակելի քաղցր օր մը: Մեր Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, մէկ օր առաջ տօնն էր Հայաստան աշխարհի առաջին լուսաւորիչ առաքեալներուն՝ Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողոմէոսի: Ս. Կարապետ Եկեղեցւոյ մէջ Ս. եւ Ամմահ Պատարագին հանդիսապետեց թեմիս բարեշան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան եւ տուաւ յաւուր պատշաճի պատգամ մը:

Ս. Պատարագը մատոյց եկեղեցւոյս հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Աւ. Թինյ. Վասիլեան եւ Ս. խորանին սպասարկեցին երկու շաբաթ առաջ Առաջնորդ Սրբազան Հօր աջով ձեռնադրուած նոր սարկաւազները:

Առաջնորդ Սրբազան Հայրը, քարոզի պահուն, վեր առնելով օրուան խորհուրդը եւ ճաշու Աւետարանի անպտուղ թզենիին առակը կապելով մեր նախալուսաւորիչ առաքեալներու՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոսի կեանքին ըսաւ. «Անոնք Զրիստոնէութեան սերմեր ցանեցին եւ հոգեւոր սերմերով պտղատու դարձան, Զրիստոսի լոյսով լուսաւորեցին մեզ եւ չնմանեցան անպտուղ թզենիին: Արդ, Աստուծմէ մեզի տրուած շնորհքներն ու պարգեւները Աստուծոյ փառքին համար օգտագործենք, ըլլանք պտղատու ծառեր, մօտենանք Զրիստոսի, պարարտացնենք մեր հոգեւոր կեանքը եւ շէնցնենք Տիրոջ այգին, մեր եկեղեցին, մեր ազգային կեանքը ու մեր ընտանիքները»:

ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ.

Յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագին, Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ թափօրը եկեղեցիէն դուրս ելաւ եւ եկեղեցւոյ շրջափակին մէջ նոր կանգնեցուած Խաչքար-Յուշակոթողին շուրջ բոլորուեցաւ:



Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ նուիրեալներէն Պրն. Յարութիւն Օժէնեան եւ զաւակունք՝ Խաչատուր եւ Օժէն, գեղեցիկ գաղափարը ունեցած էին, ի յիշատակ իրենց ծնողաց եւ մեծ ծնողաց՝ Խաչատուր Օժէնեանի եւ Չարուհի Ճավահիրեանի, Յուշակոթող մը տեղադրել եկեղեցւոյ շրջափակին մէջ: Մարմարակերտ յուշակոթողը կը ներկայացնէ Ս. Մարիամ Աստուածածինը, գրկին մէջ՝ մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Զրիստոս: Յուշակոթողի կողքին գետեղուած էր նաեւ ըմպելի ջուրի մարմարաշէն աղբիւր մը:

Առաջնորդ Սրբազան հայրը, իր կողքին ունենալով հովիւն ու խորանի ծառայողները, ինչպէս նաեւ նուիրատու ընտանիքն ու Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներն ու Ազգային երեսփոխանները,

կարդաց յատուկ աղօթք մը, օրհնեց խաչքար-յուշակոթողը եւ Ս. Միւռնոսյ սրբեց անոր ճակատը, միաժամանակ յիշելով անունները անոնց՝ որոնց յիշատակին կառուցուած էր խաչքար-յուշակոթողը: Առաջնորդ Սրբազանը օրհնեց յիշատակը Խաչատուր Օժէնեանի եւ Չարուհի Ճավահիրեանի եւ քաղցր խօսքերով դրուատեց նուիրատու ընտանիքը, անոնց մաղթելով քաջառողջ կեանք եւ իրենց բարի ու եկեղեցանուէր ծրագիրներու յաջողութիւն:

Տէրունական աղօթքի եւ «Կիլիկիա» մաղթերի երգեցողութեամբ իր աւարտին հասաւ հոգեպարար օրը:

PRELATE PRESIDES OVER DIVINE LITURGY AND UNVEILING OF MEMORIAL AT ST. GARABED CHURCH

On Sunday, December 2nd, the Feast of the Apostles Saints Thaddeus and Bartholomew were celebrated at St. Garabed Church with Divine Liturgy presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who also delivered the sermon on the first enlightener Apostles of our nation. Divine Liturgy was celebrated by parish pastor Archpriest Fr. Vicken Vassilian who was assisted at the altar by the newly ordained deacons.

Referencing the parable of the barren fig tree, the Prelate in his sermon extolled the lives of Saints Thaddeus and Bartholomew stating that they planted the seeds of Christianity and, unlike the barren fig tree, bore the fruits of their labor and illuminated the Armenian nation with the light of Christ. He continued “let us use our God-given graces and gifts to glorify Him, to become closer to Christ, nourish our spirits, and enhance our church, our families, and our community life.”



Following Divine Liturgy and requiem the Prelate was led in a procession to the courtyard to officiate over the unveiling and blessing of the new memorial. The white marble memorial depicting the Virgin Mary with baby Jesus in her lap was donated by Mr. Haroutiun Ojenian and his children Khatchadour and Ojen in memory of his parents Khatchadour Ojenian and Zarouhie Jawahirian. A marble fountain was also

built adjacent to the memorial.

The Prelate, surrounded by the pastor, deacons, donors, Board of Trustees, and delegates, blessed the memorial, recited a prayer blessing the memory of Khatchadour Ojenian and Zarouhie Jawahirian, and expressed his appreciation and best wishes to Mr. Ojenian and family.

The ceremony came to a close with the Lord’s Prayer and “Giligia”.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Երեքշաբթի, Դեկտեմբեր 4-ին, Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդները իրենց հերթական ժողովը գումարեցին, ղըպտիներու Ս. Աստուածածին եւ Ս. Աթանաս եկեղեցւոյ մէջ:

Առաջնորդ Սրբազանը, ընկերակցութեամբ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ Ազնիկեանի եւ Արժ. Տ. Ռազմիկ Քիւնյ. Խաչատուրեանի, ներկայ եղաւ ժողովին:

Օրակարգի գլխաւոր հարցն էր Միջ-Կիրակսօրեայ վարժարաններու 3-րդ տարեկան միօրեայ հաւաքը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Դեկտեմբեր 8-ին, Պըրպէնքի մէջ, Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի համալիրէն ներս: Հաւաքին մասնակցութիւն պիտի բերեն մեր Թեմի Կիրակսօրեայ վարժարաններէն 9-էն 15 տարեկան խումբ մը պատանիներ:

Ժողովը նաեւ որոշեց Մեծ Պահոց շրջանին միջ-երիտասարդաց հաւաք մը կազմակերպել:

Ժողովը ուրախութեամբ լսեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի՝ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին նախագահ ընտրուելուն լուրը եւ շնորհաւորական նամակ մը յղեց Նորին Սրբութեան:

Առաջնորդներու ժողովը վերջ գտաւ հաւաքական ճաշով:

MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On the morning of Tuesday, December 4th, the meeting of the Council of Oriental Orthodox Bishops of the Western United States took place at St. Mary and St. Athanasius Coptic Orthodox Church in Northridge.

The Prelate participated in the meeting along with Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Razmig Khatchadourian.

Among the items on the agenda was the third annual gathering for Oriental Orthodox Churches' Sunday School students to take place on Saturday, December 8, at the Western Diocese in Burbank.

Also discussed was the plan of a youth gathering during the Lent.

The council members also sent a joint congratulatory letter to H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, who was recently elected President of the Middle East Council of Churches.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՆԱԽԱԳԱՅԷ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ «ՀԱՅ ԼԵՉՈՒԻ ՏԱՐՈՒԱՆ» ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Ս. Նահատակաց եկեղեցւոյ Հովին ու հոգաբարձութիւնը կազմակերպած են Հայ Լեզուի Տարուան նուիրուած տօնակատարութիւն

մը, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, Դեկտեմբեր 11-ի երեկոյեան ժամը 7:30-ին, եկեղեցւոյ մէջ: Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ հանդիսութեան:

Բանախօսն Է Ֆերահեան Ազգ. վարժարանի հայերէնի ուսուցչուհի՝ Տիկին Ազատուհի Ղազարեան, որ պիտի խօսի «Յայ Լեզուն՝ Երաշխիքը Մեր Գոյութեան» նիւթով: Յայտագրին մասնակցութիւն պիտի բերեն եկեղեցւոյ դպրաց դասի անդամները եւ կիրակնօրեայի աշակերտները:

PRELATE TO PRESIDE OVER HOLY MARTYRS CHURCH CELEBRATION OF THE ARMENIAN LANGUAGE

Holy Martyrs Church in Encino has organized a celebration of the Armenian language which will take place under the auspices of the Prelate on Tuesday, December 11, at 7:30 p.m. The event is organized by the parish Pastor and Board of Trustees and features Mrs. Azadouhi Ghazarian as the keynote speaker.

The parish choir members and Sunday School students will participate in the artistic portion of the program.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՀՈՎԱՆԱԽՈՐԵՑ ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑՈՅՑ ՏԱՐԵԿԱՆ ԶԵՆՆԱՐԿԸ

Ուրբաթ, Նոյեմբեր 30-ի երեկոյեան, Կլենտէյլի «Հիլթըն» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Քրեսենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տարեկան ճաշկերոյթը, Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ:

Զեննարկին ներկայ էին Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, Ազգ. Վարչութեան անդամ՝ Տիար Ներսէս Մելքոնեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ տիար Զարեհ Մարգարեան եւ եկեղեցւոյ երեսփոխաններէն Տիար Իսահակ Գազանճեան, նաեւ շրջանի միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Սեղանի օրհնութիւնը կատարեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Արժ. Տ. Արտակ Քիւյ. Տեմիրճեան:

Հոգաբարձութեան ատենապետ Տիար Տիգրան Տեր Սարգիսեան արտասանեց ողջոյնի խօսք եւ ներկայացուց եկեղեցւոյ գործունեութիւնն ու աշխատանքները:

Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր օրհնութեան եւ գնահատանքի խօսքը:

PRELATE PRESIDES OVER THE ANNUAL BANQUET OF THE CRESCENTA VALLEY PARISH

On the evening of Friday, November 30, the annual banquet of the Crescenta Valley parish took place under the auspices of the Prelate.

The Prelate attended the banquet and was accompanied by Very Rev. Fathers Muron Aznikian, Fr. Barthev Gulumian and St. Mary's Church Pastors. Also in attendance were Executive Council member Mr. Nerses Melkonian, St. Mary's Board of Trustees Chair Mr. Zareh Markarian, Delegate Mr. Isahak Kazanjian, and representatives of sister organizations.

The invocation was offered by Rev. Ardag Demirjian followed by welcoming remarks by Parish Board of Trustees Chair Mr. Dikran Der Sarkissian who detailed the activities and projects of the church.

The evening concluded with the benediction by the Prelate who also conveyed his message to the parish and commended their service.